նարկատիրական գործունեություն իրականացնելու համար հիմնադրամն իրավունք ունի ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը: Հիմնադրամն իրավունք ունի ստեղծելու ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, հիմնարկներ և ստորաբաժանումներ:

20. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում,

2) ուսուցողական և տեղեկատվական սեմինարների, դասընթացների, հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում և իրականացում,

3) ուսուցողական և տեղեկատվական նյութերի մշակում և հրատարակում,

4) խորհրդատվական ծառայությունների մատուցում,

5) հաղորդակցության արշավների, մարքեթինգային և PR ծրագրերի նախագծում և իրականացում,

6) էլեկտրոնային մարքեթինգի իրականացում,

7) էլեկտրոնային գործիքների միջոցով ծառայությունների մատուցում,

8) կիրառական ու սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում, գիտահետազոտական ծրագրերի մշակում և իրականացում,

9) վերլուծությունների իրականացում,

10) մասնագիտական գրականության մշակում և տարածում,

11) հրատարակչական գործունեության և գրաֆիկական դիզայնի իրականացում,

12) համակարգչային լոկալ և գլոբալ ցանցերի նախագծում, կառուցում և սպասարկում, ինչպես նաև սերվերային համալիրների նախագծում, կառուցում, սպասարկում,

13) համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումների սպասարկում, վերանորոգում,

14) պորտալների և վեբկայքերի նախագծում, ստեղծում և սպասարկում, գործող վեբկայքերի կատարելագործում, ինչպես նաև համացանցային հոսթինգի տրամադրում,

15) բիզնես գործընթացների ավտոմատացում, համապատասխան տեղեկատվական համակարգերի ստեղծում, ներդրում և հետագա սպասարկում,

16) միջազգային գործընկերների կողմից ստեղծված SS արտադրանքի տարածում տեղական շուկայում (Distribution),

17) այլ կազմակերպությունների կողմից ստեղծված արտադրանքի համար տեխնիկական փաստաթղթերի մշակում, այդ թվում՝ տեխնիկական առաջադրանքներ, ուղեցույցներ և այլն,

18) ինտերնետ ցանց մուտքի ապահովում, ինտերնետի մատակարարում,

19) թարգմանչական ծառայությունների մատուցում,

20) սոցիալական ոլորտի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ և օրենսդրությամբ չարգելված այլ ծառայությունների մատուցում:

21. Հիմնադրամն ունի սեփականության իրավունքով առանձնացված գույք, իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, հրատարակել նյութեր և ունենալ դրանց նկատմամբ հեղինակային իրավունք, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

22. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) հիմնադրի ներդրումը,

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններն ու նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները,

3) դրամական մուտքերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,

4) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

5) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, մարզական, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

6) օրենքով չարգելված այլ միջոցներ:

23. Հիմնադիրը կարող է հիմնադրամին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել գույք:

24. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ իր գործունեության նպատակներին համապատասխան:

25. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման մասին:

26. Հիմնադրամի սեփականությունը գտնվում է պետության պաշտպանության ներքո:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

27. Հիմնադրամի կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և գործադիր տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

28. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը 9 անդամից կազմված հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որը ղեկավարում է հիմնադրամի գործունեությունը՝ սույն կանոնադրությանը համապատասխան:

29. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

2) որոշում և հաստատում է խորհրդի նիստերի օրակարգը,

3) հրավիրում է խորհրդի նիստեր՝ սեփական նախաձեռնությամբ, խորհրդի ցանկացած անդամի կամ տնօրենի առաջարկությամբ,

4) նախագահում է խորհրդի նիստերը և ստորագրում նիստերի արձանագրությունները,

5) վերահսկում է խորհրդի նիստերում ընդունված որոշումների կատարումը:

30. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից որևէ մեկը:

31. Խորհրդի բացառիկ իրավասությունն է՝

1) հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

2) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը,

3) հիմնադրամի տարեկան բյուջեի և ծրագրերի հաստատումը, հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

4) հիմնադրամի հաշվետվությունների վերստուգման համար անկախ աուդիտոր ընտրելու նպատակով անցկացվող մրցույթի արդյունքների հաստատումը,

5) հիմնադրամի գույքի նպատակային օգտագործումը, ինչպես նաև հիմնադրամի տնօրենի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը,

6) խորհրդի նախագահի առաջարկությամբ հիմնադրամի տնօրենին պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը,

7) խորհրդի կազմում փոփոխություններ կատարելը, ինչպես նաև՝ խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումներ ընդունելը,

8) հիմնադրամը լուծարելու հարցով դատարան դիմելու մասին որոշում ընդունելը,

9) հիմնադրամը վերակազմակերպելու մասին որոշում ընդունելը,

10) հիմնադրամի ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ ստեղծելը, դրանք վերակազմակերպելը, լուծարելը, կանոնադրությունները հաստատելը, ինչպես նաև դրանց գործադիր տնօրեններին պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը:

32. Խորհուրդն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

33. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստերը գումարվում են պարբերաբար՝ տարեկան առնվազն երկու անգամ:

34. Խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունելու, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

35. Խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ՝ բացառությամբ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

36. Խորհրդի սահմանած դեպքերում խորհրդի որոշումներն ընդունվում են հարցման միջոցով:

37. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամի համար կարող է սահմանվել դրամական փոխհատուցում այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է խորհուրդը:

38. Խորհրդի անդամների լիազորությունների դադարման և նոր անդամի ընտրության կարգը սահմանվում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

39. Հիմնադրամի գործադիր մարմինը տնօրենն է: Տնօրենին նշանակում է խորհուրդը՝ խորհրդի նախագահի առաջարկությամբ:

40. Տնօրենը՝

1) կազմակերպում և ղեկավարում է հիմնադրամի ընթացիկ գործունեությունը և լուծում դրա հետ կապված բոլոր հարցերը՝ բացի խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերից,

2) իր գործունեության համար հաշվետու է խորհրդին,

3) իր իրավասության սահմաններում՝ առանց լիազորագրի գործում է հիմնադրամի անունից, ներկայացնում դրա շահերը, հիմնադրամը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, կնքում պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, տալիս լիազորագրեր, բանկերում բացում հաշիվներ, հաստատում հաստիքացուցակը, արձակում հրամաններ, հիմնադրամի աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, ինչպես նաև իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և խորհրդի կողմից տնօրենին վերապահված այլ լիազորություններ:

41. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ և տնօրենի հետ կնքված պայմանագրով: Նշված պայմանագիրը հիմնադրամի անունից կնքում է խորհրդի նախագահը կամ նրա կողմից լիազորված այլ անձ:

V. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

42. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում ու ներկայացնում ֆինանսական և այլ հաշվետվություններ:

43. Հիմնադրամի տնօրենը պատասխանատվություն է կրում հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման վիճակի և դրա հավաստիության, տարեկան հաշվետվությունը, ֆինանսական և այլ հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներին հիմնադրամի մասին տրամադրվող տեղեկատվության համար:

44. Հիմնադրամի ֆինանսական գործունեությունը կարող է ենթարկվել վերստուգման՝ աուդիտ իրականացնող անձի կողմից:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

45. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

46. Հիմնադրամի լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա: Հիմնադրամի անունից, որպես շահագրգիռ անձ, կարող է հանդես գալ հոգաբարձուների խորհուրդը:

47. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1) հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,

2) հիմնադրամն իր գործունեությամբ շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,

3) հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ,

4) հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,

5) հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,

6) հիմնադրամն ստեղծելիս՝ հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

48. Հիմնադրամը կարող է լուծարվել նաև «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

49. Հիմնադրամը լուծարվում է օրենքով սահմանված կարգով:

50. Պարտատերերի կողմից պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը պարտատերերի նկատմամբ չունի պարտավորություններ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
STATE REGISTER AGENCY OF JURIDICAL PERSONS
22 ԴԵԿ. 2005 թ.